

Թիւ 24240
Փետր. 7, 1974

Արժանաշնորհ
Տ. Վարդան Բհնյ. Մկրեան
Հովիւ Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Եռնիքն Սիթի, Ն. Ճ.

Սիրելի Տէր Վարդան,

Ստացած ենք Յունուար 30, 1974 թուակիր 2եր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 27ին գումարուած է
համայնքիդ ծխական ժողովը եւ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմա-
կան Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորըն-
տիր Գիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց
ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Թովմաս Տապաքեան
Հերպրըթ Թազազմեան
Չարլզ Արզարեան
Տոքթ. Հերի Շէնլուկեան
էն Խաչատուրեան